ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Սույն հոդվածում հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկել անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հոգևոր արժեքների էությունը, բովանդակությունը և բնութագրական առանձնահատկությունները:

Հոդվածում ձևակերպված առաջարկությունները, հետևությունները և եզրահանգումներն ունեն ոչ միայն գիտական-տեսական, այլև գործնական-կիրառական նշանակություն:

Հիմնաբառեր- *անձի անվտանգություն, քրեաիրավական պաշտպանություն, հոգևոր արժեքներ, անձեռնմխելիության իրավունք, ֆիզիկական և անհատական անձեռնմխելիություն:*

Սոցիալական նշանակության տեսանկյունից խիստ կարևորվում է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հոգևոր արժեքները՝ ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը, հոգեկան ներաշխարհը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված է, որ. «Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է», իսկ 27-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված է. «1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան… օրենքով սահմանված կարգով»:

Նշված սահմանադրական իրավունքներն իրենց քրեաիրավական պաշտպանությունն են ստացել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ գլխում (հոդվածներ 131-134-րդ, 137-րդ):

Մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը կյանքի և ազատության բնական իրավունքներից ածանցված, պետության կողմից ճանաչված, նրա ֆիզիկական ազատությունն արտահայտող հնարավորություններն են: Մարդու բնական ազատությունն ամենից առաջ վերաբերում է նրա անձին: Ազատության այդ կողմն անվանում են անձնական ազատություն: Մարդն ի ծնե ազատ է: Քանի որ մարդը միաժամանակ և՛ կենսաբանական (ֆիզիկական), և՛ հոգևոր էակ է, ապա անձնական ազատությունը ենթադրում է մարդու արտաքին՝ ֆիզիկական, և ներքին՝ հոգևոր, ազատության ու ինքնավարության առկայություն: Անձնական ազատությունը նշանակում է, որ մարդն իրավունք ունի ազատորեն տեղաշարժվելու, ինչպես նաև ընտրելու իր գտնվելու վայրը: Այս իրավունքով օժտված է յուրաքանչյուր մարդ՝ անկախ տարիքից, սոցիալական կարգավիճակից կամ մեղսունակությունից:

Ազատության իրավունքի հետ սերտորեն կապված է անձի անձեռնմխելիության իրավունքը, որը բացառում է որևէ արտաքին միջամտություն մարդու անհատական կենսագործունեությանը, ապահովում է ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիություն: Լայն իմաստով՝ անձնական անձեռնմխելիությունը մարդու ֆիզիկական (կյանք, առողջություն) և բարոյահոգևոր (պատիվ, արժանապատվություն) անձեռնմխելիությունն է, ինչի արդյունքում բոլորը պարտավոր են չմիջամտել մարդու անհատական կենսագործունեությանը[1]:

«Արժանապատվություն» հասկացությունը՝ որպես սոցիալական կատեգորիա, նախասահմանում է «անձի արժանապատվություն» սահմանադրական կատեգորիայի բովանդակության համապարփակությունը և միաժամանակ բազմիմաստությունը: Որպես սահմանադրական իրողություն՝ անձի արժանապատվությունը հանդես է գալիս մարդու՝ իբրև կենսահոգեբանասոցիալական էության անհրաժեշտ և անքակտելի որոշիչ հատկանիշ՝ կարգելով նրան որպես սոցիալական կենսագործունեության լիիրավ և իրավահավասար սուբյեկտ:

Մարդկային արժանապատվությունը, ինչպես կյանքը, ընդունված չէ կախման մեջ դնել անձի հասարակական կարևորությունից, տարիքից, սեռից, համոզմունքներից և այլն: Որևէ հանգամանք, այդ թվում՝ հանրաճանաչ ըմբռնողությամբ անձի բացասական գնահատականը, հոգեկան հիվանդությունը, արտակարգ իրավիճակը, պատերազմը և այլն, չեն կարող արժանապատվության նսեմացման հիմք հանդիսանալ: Անձի արժանապատվության նսեմացում ասելով հասկացվում է ինչ-որ մեկի այնպիսի վարքագիծը, որը պատվազրկում է անձին, վնասում է նրա վարկը՝ այդպիսով նրան պատճառելով բարոյական տառապանքներ:

Արժանապատվության մասին խոսք կարող է լինել այն ժամանակ, երբ խոսվում է անձի մարդկային որակների մասին, քանզի արժանապատվությունը բացառապես մարդկային հատկանիշ է և բնորոշ չէ այլ էակների, ինչպես նաև բնությանը, հասարակությանը կամ պետությանը: Արժանապատվություն ունենալու միակ՝ անհրաժեշտ և բավարար նախադրյալը մարդ լինելն է: Արժանապատվության հիմնահարցը սկզբնապես կապված է մարդուն նրան շրջապատող միջավայրից՝ արտաքին աշխարհից տարանջատելու հետ: Սակայն չափազանց կարևոր է գիտակցել, որ արժանապատվությունը մարդու տեսակային որակ չէ. այն մարդու անհատական որակ է: Արժանապատվությունն ամենևին էլ խմբային բնորոշիչ չէ, քանզի այն մարդու բնորոշիչ է միայն իր անհատականացված արտահայտությամբ: Հետևապես, արժանապատվությունը մարդկային չէ, այլ կոնկրետ անունով մարդունն է: Իհարկե, այն բնորոշ է նաև իրենց անհատականությունը դեռևս չգիտակցող կամ այն այլևս չգիտակցող անձանց, քանզի պահպանվում է այն գիտակցելու պոտենցիալ հնարավորությունը: Խոսքը մանկահասակ երեխաների, անգործունակության հանգեցնող հոգեկան հիվանդություններով տառապող անձանց մասին է[2]:

Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արժեքներից (բարիքներից) է նրա հոգեկան ներաշխարհը՝ հոգևոր (մտավոր) գործունեությունը, վերարտադրողական կարողությունը, հոգևոր առողջությունը և այլն: Անձի հոգեկան ներաշխարհը (հոգևորությունը) կարևոր դերակատարում ունի վարքագծի մոտիվացման մեջ, հանդես գալով իբրև սահման, որը սահմանում է վարքագծի թույլատրելի, ինչպես նաև՝ շեղված տարբերակները:

Հոգևոր անվտանգության տակ հասկացվում է տվյալ հասարակության համամարդկային արժեքների մի մասը հանդիսացող հասարակության ու տվյալ հասարակության շահերին համապատասխանող մարդու և հասարակության հոգևոր արժեքների պաշտպանվածությանը: Հոգևոր անվտանգության առարկա են հանդիսանում հոգևոր այն որակները, որոնք պետք է ունենա մարդը, որոնք կազմում են անձնական ու սոցիալական բարեկեցության հիմքը[3]:

Մարդու կյանքին ու առողջությանը հասցվող սպառնալիքներն ուժեղացնող տնտեսության, քաղաքականության ու բնապահպանության վտանգավոր իրավիճակները՝ հասարակական կյանքի բոլոր կողմերի փոխադարձ կապի համակարգային բնույթի պատճառով չէին կարող առաջանալ ինքնուրույն, առանց այլ ոլորտներում, առաջին հերթին՝ հոգևոր ոլորտում առկա բացասական երևույթների հետ կապից առանձին:

Այս իմաստով, իրավական համակարգում, այդ թվում՝ քրեական իրավունքի ոլորտում հոգևոր գործոնի տեղի սահմանումը՝ ինչպես ժամանակակից քրեական իրավունքի, այնպես էլ՝ քրեական օրենսդրության տեսության ու պրակտիկայի հիմնարար խնդիրներից է:

Հանցագործի անձի սոցիալ-հոգեբանական բաղադրիչի հիմքում ընկած են իր հոգևոր որակները՝ հանցագործի վերաբերմունքը սոցիալական արժեքների ու շահերի նկատմամբ: Ցանկացած հանցագործություն կարելի է բացատրել բարու ու չարի, արդարության, սոցիալական արժեքների մասին հանցագործի կողմից այլասերված պատկերացման միջոցով:

Հասարակության, ընտանիքի, յուրաքանչյուր մարդու հոգևոր վիճակը սահմանում է նրա սոցիալ-արժեքային կողմնորոշումը, հասարակայնորեն օգտակար կամ ընդհակառակը՝ անթույլատրելի արարքների կատարման հակվածությունը: Հենց հասարակական-քաղաքական շարքում հոգևոր բաղադրիչի շտկումը պետք է և կարող է դառնալ իրավապաշտպան, պատշաճ, դրական վարքագծի նախադրյալը: Քրեական օրենքը պահանջում է, այդպես կոչված, «հոգևոր վերականգնում»:

Քրեական օրենսդրությունում հարկավոր է բազմակողմանիորեն հաշվի առնել հանցավոր վարքագծի մեխանիզմում հոգևոր բաղադրիչը, զանազան ինստիտուտների, քրեական իրավունքի հասկացությունների ու կատեգորիաների հոգևոր կողմերը: Բուն իրավունքը, այդ թվում նաև քրեականը, հանդիսանում է բարոյական ու հոգևոր արժեք: Մեր՝ իբրև քրիստոնյա ժողովրդի համար, բացի հոգևորից, առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում վարքագծի քրիստոնյա մոդելը:

Հոգևոր արժեքները պահանջում են պատշաճ պաշտպանություն՝ իրավական միջոցներով: Պատահական չէ, որ մարդու անվտանգության տեսության մեջ առանձնացվում է հոգևոր անվտանգությունը, որի իրավական ապահովումը բացառիկ նշանակություն ունի գլոբալիզացիոն գործընթացների պայմաններում, որոնք, ինչպես հայտնի է, ծնում են նաև բացասական հետևանքներ:

Հասարակության մեջ հոգևոր երևույթի էությունը կարելի է բացատրել պատշաճ վարքագծի գիտակցմամբ: Այն հիմնվում է հանրակացարանի հիմնական արժեքների վրա, այն «սահմանում է, ինչը պետք է պաշտպանվի առաջին հերթին»:

Հոգևորությունը՝ պահանջների, զգացմունքների ու շահերի ամբողջականություն է, և ուստի կարող է ձևավորել հանցագործությունների որոշակի ինտեգրատիվ պատճառ: Ուստի, քրեագիտական տեսակետից այն պետք է դրվի կանխարգելման կենտրոնում: Պրոֆեսոր Ա.Ա. Տեր-Հակոբովի խոսքերով. «...հոգևորությունը՝ հանցավորության որոշակի ընդհանուր կարգավորիչ է, որն օգտագործելով կարելի է ազդել սոցիալական շահերի ու ան-

հատական գիտակցության վրա»[4]:

Հետևաբար անձի հոգեբանական պաշտպանության օբյեկտ է հանդիսանում առաջին հերթին մարդու հոգեբանական գործունեությունը, հոգեբանական անվտանգությունը պայմաններ է ստեղծում հոգեբանական գործընթացների բնականոն գործառնության համար և բացառում է մարդու հակահասարակական վարքագիծը:

Հոգեբանական գործունեությունը իբրև հոգեբանական անվտանգության օբյեկտ հանդես է գալիս երկու՝ պասիվ ու ակտիվ կողմերով: Պասիվ որակով այն հանդիսանում է պաշտպանության առարկա. հոգեբանական անվտանգության միջոցները պաշտպանում են հոգեկանն արտաքին ազդեցությունից, կանխարգելելով սոցիալապես անթույլատրելի վարքագիծը: Ակտիվ որակով հոգեբանական գործունեությունը հանդես է գալիս իբրև վտանգի աղբյուր, իբրև մի գործոն, որից երբեմն հարկ է լինում պաշտպանվել, քանի որ իր կամ կողմնակի հոգեկան ունակություններն օգտագործելով անթույլատրելի արարքներ կատարելուն հակված մարդը, կարող է ներգործել շրջապատող մարդկանց վրա:

Հոգեբանական անվտանգությունը, այսպիսով, սահմանվում է իբրև մարդու հոգեկանի պաշտպանվածության վիճակ, որը բնութագրվում է ինչպես մարդու հոգեկանի, այնպես էլ մարդու հոգեկանից վտանգի բացակայությամբ, այն ներառում է այդպիսի վտանգի վերացմանն ուղղված հատուկ ընդունվող միջոցների ամբողջությունը[5]:

Հոգեբանական անվտանգության քրեաիրավական կողմերը կայանում են հետևյալում.

• Քրեական օրենքի առանձին հասկացությունները, կատեգորիաներն ու ինստիտուտները պետք է իրենք պարունակեն սոցիալ-հոգեբանական բնութագիր (մեղավորություն, մեղսավորություն, մեղավոր լինելը, հանցակցություն և այլն)՝

• Անձի հոգեբանական հատկությունները կարող են հանդես գալ իբրև հոգեկան էներգիան՝ հասարակայնորեն վտանգավոր արարքի էներգիայի մեջ վերափոխման միջոցով կամ հոգեկան միջամտության միջոցով:

• Հոգեբանական վտանգը ստեղծվում է մարդու հոգեկանի նկատմամբ հոգեկան առողջությունը, առաջանում են բացասական հոգեվիճակներ և խախտվում են հոգեկան գործընթացները:

• Գոյություն ունի այնպիսի հոգեկան վիճակ, որը չի ընկնում ո՛չ սպառնալիքի, ո՛չ խաբեության ներքո (այդպես կոչված, կեղծ նորմալ երևույթներ), որոնք կարող են օգտագործվել որպես հարձակում, այդ թվում՝ նաև ռազմական ու հանցավոր նպատակներով: Դրանց վերջնանպատակն է՝ բանականության նկատմամբ վերահսկողություն սահմանելը: Ներգործության այդպիսի եղանակների թվին են պատկանում բևեռացված լույսի ազդանշանով դիստանցիոն ներգործությունը («ճառագայթային զենք»), որն առաջացնում է կողմնորոշման կորուստ, դիմադրողականության ունակության կորուստ և այլն, գերձայնային գեներատորի օգտագործում (օրինակ՝ ցույցը ցրելու ժամանակ) և ենթակարմիր ճառագայթների օգտագործում և այլն:

• Հոգեբանական վտանգի այնպիսի աղբյուրների օգտագործում, ինչպիսիք են տեղեկատվական և սոցիալական աղբյուրները:

• Քրեական օրենսդրությունում անհրաժեշտ է ներառել հոգեբանական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համակարգ:

Այդպիսի հանցագործությունների համակարգը հարկավոր է դիտարկել իբրև տարբեր օբյեկտներին ուղղված արարքների ամբողջություն: Այդ օբյեկտներներից հիմնականները հետևյալն են՝

1) հարաբերություններ, որոնք ապահովում են անձի բնականոն հոգեբանական գործունեությունը: Այս հարաբերությունների նկատմամբ ոտնձգությունները ներառում են, օրինակ՝ հավաքում մարդու ինտիմ կյանքի մասին տեղեկությունների տարածման նպատակով, շորթում և այլն:

2) Սոցիալ-հոգեբանական անվտանգության հիմքը կազմող հարաբերությունները: Դրանց նկատմամբ ոտնձգությունները նույնպես կարող են վնաս պատճառել առանձին անձանց, սակայն դրանց վտանգը նրանում է, որ դրանք ուղղված են ոչ թե առանձին անհատի դեմ, այլ՝ ընդհանուր առմամբ հասարակության դեմ: Այդպիսի հանցագործությունները ներառում են՝ հոգեկանի վրա զանգվածային ներգործություն (օրինակ՝ հեռուստատեսային թերապիայի չարտոնված անցկացում մարդկանց հավաքույթների վրա չարտոնված միջոցներով ներգործություն՝ նպատակ ունենալով դադարեցնել որևէ զանգվածային միջոցառումներ, մասնավորապես՝ հանրահավաքները, ժողովները, ցույցերը, զանգվածային անկարգությունների կազմակերպումը և այլն: Առանց տուժողի համաձայնության հոգեբանական փորձերի անցկացումը, խաբեությամբ, առողջության զանգվածային խանգարում առաջացնելը և այլն: Բնական միջավայրի վրա ներգործությունը՝ իբրև մարդկանց հոգեկանի նկատմամբ ոտնձգության եղանակ: Նախապես հայտնի կեղծ գիտական գաղափարների տարածում, որոնք առաջացնում են վախ, տագնապ, զանգվածային անկարգություններ և հակահասարակական այլ գործողություններ:

3) Քրեական օրենքով պաշտպանվող այլ հարաբերություններ: Այստեղ հնարավոր են հանցագործություններ, որոնցում հոգեբանական առողջության նկատմամբ ոտնձգությունը հանդես է գալիս իբրև հստակ հակահասարակական նպատակներին հասնելու միջոց: Սովորաբար դա նվաճվում է անձի գիտակցության նկատմամբ վերահսկողու-

թյուն իրականացնելու ճանապարհով: Այդպիսի եղանակների օգնությամբ հնարավորություն է առաջանում մարդուն՝ իբրև հանցագործության գործիք օգտագործելու համար՝ այլ շահերին վնաս պատճառելու համար՝ սպանություններ, առողջությանը վնաս հասցնելը, գողություններ, պետական կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների հավաքում ու փոխանցում:

Մշակվող նոր քրեական օրենսգրքի նախագծում պետք է ստանան արժանի իրավական կարգավորում նաև անվտանգության այլ տեսակները՝ բնապահպանական, տեղեկատվական, վերարտադրողական, պատմական, ռազմական ծառայության:

Եզրակացնելով, անհրաժեշտ է նշել, որ նոր քրեական օրենսգրքի նախագիծը և հայեցակարգը պետք է կառուցվեն անձի, հասարակության ու պետության անվտանգության՝ իբրև քրեական քաղաքականության նոր, առաջատար ուղղության ուսմունքի վրա:

---

[1] Տե՛ս, «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Ե., 2010, էջեր 186-197:
[2] Տե՛ս, նույն տեղում, էջեր 163-170:
[3] Տե՛ս, Аветисян С.С. Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016: С. 239-240.
[4] Տե՛ս, Тер-Акопов А.А. Преступление и проблемы нефизической причинности в уголовном праве. М., 2003, С. 246-247.
[5] Տե՛ս, Аветисян С.С., նշվ. աշխ. էջ 242:

Вардгес Саргсян
Прокурор управления по особо важным
делам генеральной прокуратуры РА,
соискатель института философии, социологии
и права Национальной Академии наук РА.

РЕЗЮМЕ

Нематериальные блага уголовно-правовой защиты безопасности личности

В данной статье автор всесторонне анализировал сущность, содержание и характерные особенности нематериальных благ уголовно-правовой защиты безопасности личности.

Предложения и выводы, сформулированные в статье, имеют не только научно-теоретическое, но и практическо-прикладное значение.

Ключевые слова: *безопасность личности, уголовно-правовая защита, нематериальные блага, право на неприкосновенность, физическая и личная неприкосновенность.*

Vardges Sargsyan
Prosecutor of the department of general prosecutor's office of RA,
Research Applicant of the Institute of Philosophy, Sociology and
Law National Academy of Sciences of the Republic of Armenia.

SUMMARY

Non-material values of the criminal-law protection of the security of person

In this article, the essence, content and characteristic features of the non-material values of the criminal-law protection of the personal security are examined comprehensively.

Proposals and conclusions formulated in the article have not only scientific and theoretical, but also practical importance.

Keywords: *personal security, criminal-law protection, non-material values, right to inviolability, physical and personal inviolability.*